Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2021 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով նախատեսվում է տարեկան արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրության վերաբերյալ կազմված վերլուծական տեղեկանքը:

Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման մասով հանրությանն իրազեկելու նպատակով նախատեսվում է կազմել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել 2020 թվականին հանձնաժողովում մուտքագրված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը:

Նախատեսվում է մշակել էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի վերաբերյալ ծանուցման ձևերը՝ համաձայն Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2014 թվականի փետրվարի 26-ի թիվ 256/2014 կանոնակարգի:

Նախատեսվում է սահմանել փոստային կապի ունեվերսալ ծառայությունների սակագները:

Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով նախատեսվում է իրականացնել հանրային կազմակերպությունների 2020 և 2021 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն

իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կիրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- հեռահաղորդակցության ոլորտը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշները: